ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը.

Զարա Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) անձնակազմի կառավարման վարչության մրցույթների, վերապատրաստման կազմակերպման և վերլուծության բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2023 թվականի ապրիլի 26-ից 28-ը

3. Հրավիրող կողմը.

Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայություն

4.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Բիզնեսի և պետական կառավարման թվայնացման հեռանկարների, հարկային վարչարարության ոլորտում լավագույն փորձի և նորարարությունների փոխանակմանը նվիրված, ինչպես նաև պետական ծառայությունում մարդկային ռեսուրսների ինստիտուտի փոխակերպման, անձնակազմի հետ աշխատանքում ժամանակակից նոր կադրային տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ քննարկմանը մասնակցելու նպատակով:

Աշխատանքային խմբի անդամների ներկայացված առաջարկությունների և դիտողությունների ընդհանրացում և քննարկում, որոնք հնարավորություն կտան ընթացիկ գործելակերպը բարելավելու նպատակով բերել անձնակազմի հետ աշխատանքում ժամանակակից նոր կադրային տեխնոլոգիաների կիրառման լավագույն փորձի օրինակներ:

5. Քննարկված թեմաները

Ֆորումի աշխատանքային խմբի խորհրդակցությունների ընթացքում քննարկվեցին հարկային համակարգում կադրային քաղաքականության գործընթացի բարեփոխումների ռազմավարական ծրագրերի, փոփոխությունների իրականացման առաջարկությունների, գերակա խնդիրների վերաբերյալ մի շարք հարցեր: Այս քայլերն ուղղված էին համակարգը

բարձրակարգ մասնագետներով համալրելուն, կադրային քաղաքականության բարելավմանը, որի նպատակն է բարձր մակարդակի հասցնել համակարգի կադրային բազան՝ այն համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին:

Այս բարեփոխումների նպատակներն իրականացնելու համար աշխատանքներ պետք է տարվեն հարկային մարմինների վերլուծական կարողությունների զարգացման, համակարգի կառուցվածքի և գործառույթների կատարելագործման ուղղություններով, ինչպես նաև հարկային ծառայության անձնակազմի կանոնավոր և համապարտադիր ուսուցման մեխանիզմով. համակարգը բանիմաց և լավագույն մասնագետներով համալրելու գործընթացով՝ մասնագետների վերապատրաստման, պարտադիր վերապատրաստման անցկացման գործընթացի և վերլուծական կարողությունների բարձրացման ուղղությամբ:

Կարևորվում էր նաև գիտելիքների ընդլայնումը տեղեկատվական, հեռահաղորդակցության տեխնոլոգիաների և նորարարությունների վերաբերյալ: Նորարարական գործունեությունը և ինովացիոն տեխնոլոգիաները ժամանակակից աշխարհում տնտեսական բարգավաճման հիմնական շարժիչ ուժն են: Դրանք հնարավորություն են ընձեռում ապահովելու երկրների աշխարհաքաղաքական, ռազմական և տնտեսական հզորության ու անկախության կարևորագույն հիմնախնդիրները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացրած կամ քննարկված հարցեր՝

Միջոցառմանը մասնակցելու համար հրավիրված էին Եվրասիական տնտեսական միության, Անկախ պետությունների համագործակցության, «ԲՐԻԿՍ» (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան, Հարավաֆրիկյան Հանրապետություն) խմբի մասնակից երկրների թվային զարգացման համար պատասխանատու հարկային մարմինների, ֆինանսական գերատեսչությունների, պետական կառավարման մարմինների ղեկավարներն և փորձագետները, ինչպես նաև թվայնացման և միջազգային հարկման ոլորտներում գիտական և մասնագիտական հանրության ներկայացուցիչները:

Ֆորումի առաջին օրը նվիրված էր անդրսահմանային առևտրի թվայնացմանը, վերջինիս հեռանկարներին և խոչընդոտներին, քննարկվեց ինչպես հարկային վարչարարության, այնպես էլ պետական կառավարման տեսանկյունից էլեկտրոնային

փաստաթղթաշրջանառության զարգացման հնարավորությունները, ինչպես նաև ԵԱՏՄ-ում և ԱՊՀ-ում անդրսահմանային առևտրի թվայնացման հեռանկարները:

Ֆորումի երկրորդ օրվա ընթացքում թեմատիկ սեմինարներ անցկացվեցին, որոնց ընթացքում քննարկվեցին անդրսահմանային գործարքների հարկային հսկողությանը, ընկերությունների թվային էկոնոմիկայի հարկմանը, հարկային վարչարարության շրջանակներում հաճախորդներին ուղղված ծառայությունների զարգացմանը վերաբերող հարցեր:

Բացի վերոհիշյալից, Ֆորումում առաջին անգամ անցկացվեց ԱՊՀ մասնակից պետությունների հարկային ծառայությունների ղեկավարների համակարգող խորհրդի XXIX նիստի որոշման համաձայն ԱՊՀ հարկային ծառայությունների կադրային ներուժի զարգացմանն ուղղված համատեղ ծրագրի առաջին առկա մոդուլը, որին մասնակցելու համար հրավիրվել էին ԵԱՏՄ և ԱՊՀ անդամ երկրների հարկային ծառայությունների աշխատակիցները, որոնք պատասխանատու են մարդկային ռեսուրսների հարցերի համար, ինչպես նաև այդ ոլորտի մասնագետները:

Վերոհիշյալ մոդուլի շրջանակներում նիստերի ժամանակ քննարկվեցին պետական ծառայությունում մարդկային ռեսուրսների ինստիտուտի փոխակերպման, անձնակազմի հետ աշխատանքում ժամանակակից նոր կադրային տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ կարևոր թեմաներ: Ներկայացվեց Ռուսաստանի դաշնային հարկային ծառայության լավագույն փորձը, անձնակազմի կառավարման ոլորտում կիրառվող արդյունավետ միջոցառումների ինստիտուտը: Աշխատանքային խմբի ներկայացուցիչները ներկայացրեցին զեկույցներ՝ կատարած վերլուծությունների արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև նախատեսված էին համակողմանի և արդյունավետ քննարկումներ, պլենար նիստեր, հնարավորություն տալով իրականացնել միջազգային փորձի և կարծիքների փոխանակում:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Միջոցառման ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն շարունակել հետագա աշխատանքները և կազմակերպել քննարկումներ նաև օնլայն հարթակում, մշակել հետագա քայլերի հաջորդականություն, գործողությունների արդյունավետ իրականացման և սահմանված նպատակներին հասնելու համար:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը. ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Ռուսաստանի դաշնային հարկային ծառայությունը նպատակ ունի նման ֆորմատով Ֆորումները շարունակել և զարգացնել՝ ամփոփելու նախորդ ֆորումներից հետո բարեփոխումների կիրառելու կարողությունը, առաջադիմության համեմատական վերլուծությունը և կատարած վերլուծությունների քննարկումները: Ուստի, հնարավորության դեպքում, ցանկալի է հետագայում նախաձեռնել ու խրախուսել Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության ներկայացուցիչների մասնակցությունը հետագա կայանալիք Ֆորումներին: Մասնավորապես, մարդկային ռեսուրսների ոլորտի մասնագետների մասնակցությունը կադրային ներուժի զարգացմանը նվիրված հարցերի պանելային քննարկումներին, փորձի և մասնագիտական գիտելիքների փոխանակման հիանալի հնարավորություն կընձեռեն, ինչպես նաև ծանոթանալու անձնակազմի կառավարման նոր մոտեցումներին ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, հարկային ծառայության նկատմամբ աշխատողների հավատարմության մակարդակը գնահատելու համար հետազոտությունների անցկացման: Շատ կարևոր է նաև երաշխավորել մարդակենտրոն հասարակության ամրապնդումը, որն ենթադրում է հանրային հատվածի և անհատի միջև հարաբերությունների այնպիսի ընթացք, որի յուրաքանչյուր փուլում մարդը պետք է լինի ուշադրության կենտրոնում և այդ սկզբունքի ներդրումը կնպաստի հանրային ծառայությունների որակի (ժամանակի և ջանքերի մեծ ծախսերի) բարելավմանը:

9. Ստորագրություն, ամսաթիվ

Զ.Հովհաննիսյան

03.05.2023